

ԴՈՆԱՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Բժշկական գիտությունների թեկնածու

ՄԵԲԱՍՏԱՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՄԵՍԻՅԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ

17-18-րդ դդ. սեփաստահայ բժիշկների մատենագրական ժառանգության առավել լիակատար ուսումնասիրությունն ու գնահատումը հնարավորություն է ընձեռում նոր տվյալներով հավաստելու «Մեփաստահայ բժշկագիտական դպրոց» հասկացության փաստը՝ այն դիտելով որպես դարեր հարատևող հայ բժշկագիտության չընդհատվող շղթայի կարևոր օղակներից մեկը, առանց որի հնարավոր չէ տալ հայ բժշկագիտության քիչ թե շատ ամբողջական նկարագիրը:

Անշուշտ, այդ դպրոցի լավագույն ներկայացուցիչները եղան Հովասափ, Ասար և Բունիաթ Մեփաստացիները, որոնց բժշկագիտական աշխատություններին առիթ ենք ունեցել հանգամանորեն անդրադառնալու առանձին հոդվածներում և ուսումնասիրություններում: Արդեն հրատարակվել են Հովասափ Մեփաստացու «Բժշկարան ընտրեալ տարրական մախցի» բնագիտական երկը¹, Բունիաթ Մեփաստացու «Գիրք բժշկութեան տումարի» բժշկարանը², Ասար Մեփաստացու «Գիրք բժշկական արհեստի» արժեքավոր երկը³:

Սակայն Հովասափ, Ասար և Բունիաթ Մեփաստացիները այդ բժշկագիտական դպրոցի միակ ներկայացուցիչները չեն: Մեփաստահայ բժշկագիտական դպրոցը հետագայում տվեց նաև այլ գործիչներ ի դեմս Հակոբ, Մարտիրոս, Օհան-Պարսամ, Պարսամ Մեփաստացիների, որոնք փաստորեն հանդիսացան այդ դպրոցի ավանդույթների լավագույն շարունակողները: Վերոհիշյալ բժիշկների գործերը նույնպես ինքնատիպ ինքնագրություններ են՝ գրված ըստ արաբ, պարսիկ, ասորի, հույն և լատին հեղինակների: Հիշատակության արժանի է հատկապես Մարտիրոս Մեփաստացու կազմած բժշկարանը, որի համար հավանաբար հիմք է ծառայել Հովասափի «Բժշկարան ընտրեալ տարրական մախցի» բնագիտական երկը: Այդ ձեռագրի վրա տարիներ առաջ մեր ուշադրությունը հրավիրեց Անուշավան վրդ. Դանիելյանը, որը հրատարակության էր պատրաստում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ձեռագրաց ցուցակը⁴:

Մարտիրոս Մեփաստացու բժշկարանը բաղկացած է 140 էջերից, որոնք բաժանվում են հինգ գլուխների: Գլխացանկը հիմնականում համընկնում է Հովասափի բժշկարանի գլխացանկին:

Ձեռ. N 114, Բժշկարան, Արգրում – 1713, գրիչ՝ Թեոդոս: Ստացող՝ Կարապետ տիրա-

¹ Դ. Կարապետյան, Հովասափ Մեփաստացու «Բժշկարան ընտրեալ տարրական մախցի» բնագիտական երկը. – «Բանբեր Մատենադարանի», ՀԽՍՀ ԳԱ, Երևան, 1986, էջ 288-316:

² Բունիաթ Մեփաստացի, Գիրք բժշկութեան, աշխատասիրությամբ Դ. Մ. Կարապետյանի, ՀԽՍՀ ԳԱ, Երևան, 1987:

³ Ասար Մեփաստացի, Գիրք բժշկական արհեստի, աշխատասիրությամբ Դ. Մ. Կարապետյանի, ՀԽՍՀ ԳԱ, Երևան, 1993:

⁴ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, կազմեց Անուշավան վարդ. Դանիելյան, Անթիլիաս, 1984, էջ 369:

ցու թօխադեցի: Թերթ՝ 70: Նիւթք՝ թուղթ: Մեծութիւն՝ 18,3x12,3: Գրութիւն՝ երկսիւն: Գիր՝ նօտրգիր: Տող՝ 37: Կազմ՝ մանիշակագոյն թաւապատ խաւաքարտ:

Բովնդկ. $1ա^1-69ա^2$ – Բժշկարան Մարտիրոսի Սեբաստացոյ

1. $1ա^1-2ա^1$ Յառաջինն գրեմք զեղանակ դեղոց հաւաքելոյն:

2. $2ա^1-7ա^2$ Յաղագս մարդակազմութեան. Յաղագս բնութեան մարդկան, թէ որպէս արարչագործեցան յարարիչէն իւրեանց, վասն զի ի չորից նիւթից ասի գոյացեալ մարդ:

3. $7ա^2-11ա^2$ Դուռն երեք, որ ցուցանէ զնշան ցաւոց և հիւանդութեանց:

4. $12ա^1-37բ^2$ Վասն ամենայն ցաւոց Ա-Ֆ:

5. $38ա^1-69ա^2$ Պատմութիւն ամենայն դեղերոց ընտիր թիրաքնուն⁵:

Վերոհիշյալ բժշկարանի երկրորդ՝ «Յաղագս մարդակազմութեան» բաժինը գլուխների հաջորդականությամբ ոչ միայն չի համընկնում Հովասափ Սեբաստացու բժշկարանի մարդակազմության հատվածի հետ, այլև թերի է, պակաս են մի շարք գլուխներ:

Այսպէս.

Հովասափ Սեբաստացի	Մարտիրոս Սեբաստացի
Վասն շինուածոյ գլուխն եւ ըղեղին է այս:	Վասն շինուածոյ գլխոյն եւ ըղեղուն:
Վասն ըստըղծման սրտին:	Վասն աչացն կազմութեան:
Վասն ըստըղծման լերդին, որ է տանու-տէր անձինն:	Վասն ականջին:
Վասն ստըղծման փայծղանըն:	Վասն շինածոյ քթին:
Վասն ստըղծման թոքին:	Վասն բերանոյն:
Վասն ստըղծման լեղոյն:	Վասն սրտին:
Վասն ստըղծման իրիկամացն:	Վասն փայծղանն:
Վասն ստըղծման ստամոքին եւ յօրինվածոյ նորին:	Վասն երիկամացն:
Վասն ստըղծման աղեցն:	Վասն կերպին եւ խորհրդին:
Վասն ստըղծման հալաբշտին:	
Վասն ստըղծման եւ յաւրինուածոց աչաց:	
Վասն ստըղծման ականջին:	
Վասն ստըղծման քթին:	
Վասն ստըղծման պոնկաց եւ լեզուին:	
Վասն ստըղծման ձեռացն:	
Վասն ստըղծման ծրծերուն:	
Վասն ստըղծման ձրվերուն:	
Վասն ստըղծման ճուճին:	
Վասն ըստեղծման ոսկերացն եւ մսին եւ ջղին եւ կցուածոցն մարմնոյն եւ ամենայն անձին:	
Վասն ստեղծման էզաներուն, որ կտոր մի միս յոսկորն:	
Վասն ստըղծման երակուն, թէ քանի է եւ	

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 370:

քանի բաժանի:

Վասն օրինումայ եւ ըստեղծման փայ-
վանդներուն:

Մարդակազմության բաժնի ավարտից հետո Հովասափ Մեքաստացու բժշկարանի «Վասն զնշան ցաւոց եւ հիւանդութեանց», «Վասն ամենայն ցաւոց Ա-Ֆ» և «Պատմութիւն ամենայն դեղերոց թրիաքնուն» գլուխները բացակայում են Մարտիրոս Մեքաստացու բժշկարանում:

Բժշկարանի վերջին 5-րդ բաժինը կազմված է 47 փոքր հատվածներից, որտեղ նկարագրված են 50-ի չափ «մեծամեծ և պիտեւան» դեղեր, որից հետո հեղինակը հակիրճ քննարկում է բեղմնավորման, պտղի աճի ու զարգացման, ծննդաբերության հետ կապված բնախոսական-ֆիզիոլոգիական խնդիրներ: Ձեռագիրն ունի մի շարք հիշատակարաններ, որոնցից մեկը հավաստում է տվյալ բժշկարանի՝ Մարտիրոսի կողմից գրված լինելու փաստը. «... Բայց մեք անպիտան և անարժան ծառայքս ձեր՝ մեղապարտ Մարտիրոս սուտ անուն Մեքաստացի կամեցայ զընտիրսն հաւաքել և բացայայտել փոքր ի շատե ի գրոց իմաստասիրական և բժշկական...»⁶: Անհայտ է բժշկարանի գրման ստույգ թվականը, որը հետագայում՝ 1713 թ. ընդօրինակվել է գրիչ Թեոդոսի կողմից. «Թուին ՌՃԿԲ (1773) եղել ըսկիզբն գրոյս Յունիսի ԺԷ (17), ձեռամբ Թեոդոսի բանասիրի ի քաղաքս Թեոդուպոլիս, որ է Կարնոյ եւ այժմ մակաձայնի Արգրում, ի վայելումն Թօխադեցի տիրացու Կարապետին. 1162»⁷:

Ուշագրավ է բժշկարանի 36-րդ գլուխը.

49ա²-50ա¹ ԼԶ. «Ըսկիզբն շինման պողպատիս, բարեպաշտ արքայն Հեթում բերեալ ի Պարսկաց ի Հայս, ի թվին ԶԾԳ (1304) եւ ետ թարգմանեալ. զոր մեծ կայսրն Նասր խալիֆան գտեալ էր...

Եւ այս խրատնիս այլ հետ պողպատ շինելուն եւ մուխ տալուն հետ էր գրած ի նոյն իմաստասիրացն Պարսից, զոր թարգմանեց Հեթում թագաւորն Հայոց, յորժամ զնաց ԺՀՌ (18000) հեծելով ի վերայ թշնամոյ սուլտանին, եւ կոտորեց եւ ըսպառեց զամենեւին եւ զնաց մեծաւ պատռով ի Պաղտատ, առ Նասր խալիֆայն եւ մեծ պարգևօք դարձաւ եւ իմաստասէր ոմն սարկաւագ Ստեփան անուն գտեալ առ կայսրն, որ անչափ ազգի գիր եւ լեզու ուսեալ՝ նման առաջին փիլիսոփայիցն, եւ ոչ կայր գիր, որ առ նմա ոչ գտանէր: Եւ նա սիրեցեալ եղել ի հայոց թագաւորէն, վասն հօր գիտութեան, եւ խնդրեաց յարքայէն, եւ ետ թարգմանել Գ (3) գիրս՝ Վասն ձիոյ պայթարնամանի, եւ Վասն թրի շինելու եւ Վասն արեգական եւ լուսնի արուեստին, եւ բերեալ ի Հայոց աշխարհս»⁸:

Խոսքը վերաբերում է պողպատաձուլության, ձիադարմանության, սրագործության և աստղագիտության հարցերին նվիրված գրքերին, որոնք Կիլիկիայում Հեթում Ա թագավորի հանձնարարությամբ 13-րդ դ. թարգմանվել են հայերեն Ստեփաննոս սարկավագի կողմից: Դժբախտաբար այդ արժեքավոր թարգմանություններից միայն առանձին հատվածներ են պահպանվել հետագա դարերի հայերեն ձեռագրերում: Վերոհիշյալ հատվածը առկա է նաև Փարիզի Ազգային գրադարանում պահվող «Գիրք

⁶ Նույն տեղում, էջ 369:

⁷ Նույն տեղում, էջ 371:

⁸ Անթիլիաս, ձեռ. N 114, էջ 49ա²-51բ¹:

արուեստի քիմիական» խորագիրը կրող հայերեն մի ձեռագրում⁹:

Մեքաստահայ բժիշկների մի նոր տոհմի մասին տեղեկանում ենք հայերեն մի ձեռագիր-բժշկարանից, որը 1964 թ. Մաշտոցի անվ. Մատենադարանը նվեր է ստացել նյույորքաբնակ Պարզև Մեսիյանից¹⁰: Նվիրատուն նաև որոշ տեղեկություններ է հաղորդում Մեսիյան-Մեքաստացիների բժշկական տոհմի մասին, որի վերջին շառավիղներից է նաև ինքը:

Ցարդ մեզ հայտնի էին միայն սեքաստահայ բժիշկների 2 տոհմեր՝ Ասարյաններ և Հեքիմյաններ, որոնց սերունդները 3 դար շարունակ անվանի բժիշկներ են տվել: Ահա պարզվում է, որ 17-18-րդ դարերում, ինչպես նաև հետագայում, Մեքաստիայում ապրել և գործել է բժիշկների Մեսիյան-Մեքաստացիների ընտանիքը: Հայտնի է, որ 1600 թ. քիչ առաջ Պարսկաստանի Խոյ քաղաքից հայկական մի ընտանիք է գաղթում և հաստատվում սկզբում Մեքաստիայի Իմարեթ գյուղում, այնուհետև Մեքաստիա քաղաքում: Տոհմի նախնիներից Հակոբ վարդապետ Մեսիյանը, որի մկրտության անունը հայտնի չէ, 17-րդ դ. գրել է վերոհիշյալ բժշկարանը, որը հետագայում շարունակել և լրացրել է նրա թոռ Մաթուս աղան: Հակոբը վարդապետ է դարձել, երբ արդեն ուներ հասուն զավակներ և կորցրել էր կնոջը: Հակոբը զբաղվել է բժշկությամբ: Նա հասել է մինչև եպիսկոպոսական աստիճանի և դարձել է Մեքաստիայի առաջնորդ: Այդ մասին հիշատակություններ կան N 10277 ձեռագրի 82ա, 148ա, 201ա, 221բ էջերում: Հակոբի որդին նույնպես բժիշկ է եղել և ապա կրոնավոր՝ Աստվածատուր վարդապետ անունով, որի մասին հիշատակություն կա ձեռագրի 77բ էջում: Նա հասել է արքեպիսկոպոսության աստիճանի և դարձել է Մեքաստիայի առաջնորդ: Աստվածատուր վարդապետի որդիները՝ Մաթուս աղա և Եղիազար դպիրները՝ հետևելով իրենց նախահայրերի օրինակին նախ բժիշկ, հետո կրոնավոր են դարձել: Եղել են Մեքաստիա քաղաքի առաջնորդներ: «... Ծրագրեցաւ բժշկական գիրքս ձեռամբ Աստվածատուր վարդապետի որդի՝ Մաթուս աղայ դպրի Մեքաստեան, որ յետոյ եղև շնորհին Աստուծոյ արքեպիսկոպոս և առաջնորդ Լուսաբերանից արքոց հրեշտակապետաց մենաստանին ՌՃԿԷ (1718 թ.), որ յաւուրս նորա եղև նորոգումն համանգամայն ներքոյ և արտաքոյ չքնաղ և զարմանալի, սրբատաշ և կրաշաղախ, կամարակապ տաճարօք և կմբեթայարկ բարձրահայեաց խորանօք և հաստահիմնեալ անառիկ պարսպօք և ապահով դարպասսիւք բազմօք որ ոչ գայր յառաջ, ի թուին ՌՃՀԸ (1729 թ.): Որք հանդիպիք և զուարճանայք յիշեսցիք ի մաքրափայլ յադօթս ձեր և դուք յիշեալ լիջիք առաջի ահաւոր բեմբին Քրիստոսի՝ ամեն»¹¹:

«Ծրագրեցաւ մատամբ Եղիազարու քարտուղարի դպրի», «Ձեռամբ տարապատկան Եղիազար վարդապետի ծրագրեցաւ ՌՃԿԳ (1714 թ.) ի ժամանակս ծնողին իւրոց Աստվածատուր վարդապետին և առաջնորդի Սրբոց Հրեշտակապետաց տաճարին,

⁹ Stéu Catalogue des Manuscrits Arméniens et Géorgiens de la Bibliothèque Nationale par F. Macler, Paris, 1908, p. 130 (Ms. 248). Նաև Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ (ԺԳ դ.), աշխատասիրությամբ Բ. Լ. Չուգասցյանի, ՀՄԽՀ ԳԱ, Երևան, 1980, էջ 22:

¹⁰ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 10277: (ԺԸ դ.), 1631, 1711 թթ. Մեքաստիա, գրիչ, ստացող՝ Հակոբ վրդ. (Ա), Մատթեոս (Բ), Մաթուս աղա դպիր, հետագայում Եզիազար արքեպիսկոպոս (Բ), Սաղաթել տիրացու (Գ): Թերթ՝ 387: Թուղթ: Հշտկրն գրչի՝ 221բ (կնիք՝ 1631 թ., Յակոբ վրդ.), 60 բ, 100ա, 137բ, 138բ, 139ա, 248բ (1711 թ.): Հետագայի՝ 79բ, 319ա, 320բ, (1714 թ.), 77բ (1718 թ.), 77բ (1719 թ.), 199բ (1742 թ.), 77բ, 138ա, 286բ (1747 թ.), 291ա (1749 թ.), 61բ, 298բ, 313ա (1750, 1752, 1753 թթ.), 168բ (ԺԸ դ.):

¹¹ Մատ. ձեռ. N 10277, էջ 77բ:

որի ի կերտին Սեբաստիոյ»¹²:

Ձեռագրի մեջ ևս կա հիշատակված նաև Եղիազար եպիսկոպոսի անունն իբրև գրչի և բժշկարանը լրացնողի, ինչպես նաև Մատթեոս¹³ և տիրացու Սաղաթելի անունները¹⁴, որոնք հավանաբար Եղիազար եպիսկոպոսի եղբայրներն են:

Բժշկարանում կան մի շարք դեղատոմսեր Եղիազար վարդապետի անունով, որոնք միայն գործնական բնույթ ունեն. «Եւ ես Եղիազար վարդապետս լսայ յումեմնէ, թէ այս ցաւոյս որ դեղերն չօգնեն և անճարակ մնան, նայ սընդիկ կու խմեցնեն, որ բանայ գաղիբն»¹⁵:

Նա մի բուժամիջոց էլ առաջարկում է դժվար բուժելի վերքերի (ֆռանկի եարայ, չարաչար և վատ և անողջանալի) բուժման համար. խոսքը վերաբերում է սիֆիլիս հիվանդությանը. «Հապ ֆռանկ եարայի, աղի պաղլամի, պիսակի և պարասի, դուպայի և չարաչար քամոյ և սգուի և այլ ձեռք և ոտք պատըռտածի և այլ չարաչար և վատ և անողջանալի եարաներաց: Առ օտըլղահիր և խունկ ժբ, ժբ. տրամ, սուլմէն բ. տրամ, մաստէքի ժ, տրամ, սապո ժե. տրամ, սինամէքի ի. տրամ, ֆարֆիոն, սալաթին, դեղին քկուռո, սուրինճան և սամղ արապի ե. ե. տրամ, ծեծէ բարակ զամէնն գատ գատ և խառնէ յիրար և յառաջ զհոգին մեռոյ քացխով, կամ լիմօնի ջրով և զլոսած դեղրանքդ լից ի հաւան և շաղէ և ապայ լից զհոգին ի նէրս և միաւորեայ և հապեր արայ փոքր ուլեռան չափ և տուր երեկոյ և առաւօտ բ. բ. հատ և կամ գ. գ. ըստ ուժոյն, լաւ պատրաստութեամբ և օգտէ կամոքն Աստուծոյ:

Եւ զանարժան Եղիազար վարդապետս յիշեայ ի Քրիստոսէ»: Այնուհետև ավելացնում է. «Եւ զԵղիազար վարդապետ բժիշկս յիշեայ ի դրախտ և այս նուսխայս յոյժ զօրաւոր և օգտակար բան է Աստուծով»¹⁶:

Հայտնի է, որ Մեսիյան-Սեբաստացիների կողմից գրվել են նաև ուրիշ բժշկարաններ, դրանցից մի քանիսը ժամանակին եղել են ֆրանսահայ բժշկա-պատմաբան Վահրամ Թորգոմյանի ձեռքի տակ և ուսումնասիրվել են նրա կողմից:

Մեսիյան-Սեբաստացի տոհմի ժառանգներից մեկը՝ Հովհաննես Սերովբեի Մեսիյանը, դեղագործ է եղել և գրել է այս բժշկարանի տոհմի պատմությունը: Այն պահվում էր Սեբաստիայի Ս. Նշան վանքի թանգարանում, և ամենայն հավանականությամբ ձեռագիրը ոչնչացվել է 1915 թ. Եղեռնի օրերին, երբ Ս. Նշան վանքում գրեթե իսպառ ոչնչացվեցին մոտ 300 հայերեն ձեռագրական միավորներ¹⁷:

Վերոհիշյալ 10277 ձեռագիր-բժշկարանը 1915 թ. տարագրության ժամանակ Մեսիյան տոհմի ժառանգներից մեկը հասցրել է Հալեպ և հանձնել Զապել Մեսիյանին: Եվ վերջապես 1964 թ. Զապել Մեսիյանի եղբայրներ Հրանտ և Պարզն Մեսիյանները՝ Եղիազար եպիսկոպոսի ութերորդ սերունդները, որոշեցին այս շատ արժեքավոր բժշկարանը նվիրաբերել Մաշտոցյան Մատենադարանին:

Սեբաստահայերի բժշկական այս տոհմը կոչվել է Մեսիյան՝ իբրև սերունդ Եղիազար եպիսկոպոսի որդի Մեսիյայի, որ նույնպես բժիշկ է եղել, ինչպես նաև նրա հա-

¹² Նույն տեղում, էջ 248բ:

¹³ Նույն տեղում, էջ 248բ:

¹⁴ Նույն տեղում, էջ 168բ:

¹⁵ Նույն տեղում, էջ 320բ:

¹⁶ Նույն տեղում, էջ 226բ:

¹⁷ Թ. Գուշակեան, Յուզակ հայերեն ձեռագրաց ս. Նշանի վանուց ի Սեբաստիա, Վիեննա, 1961, էջ 2:

ջորդներից շատերը, որոնցից վերջինը՝ բժիշկ Կոզմաս Մեսիյանը, մահացել է Երևանում 1936 թ.:

Մեսիյան բժշկական տոհմից մեզ հասած N 10277 ձեռագիրն ունի հետևյալ նկարագիրը:

Բովնդկ. – Ամիրդովլաթ Ամասիացի – Զօրութին դեղերուն (1բ-67բ):

Ամիրդովլաթ Ամասիացի – Ախրապատին (68ա-77բ):

Ամիրդովլաթ Ամասիացի – Անգիտաց անպետ (82ա-103բ): 82ա – Անուանք դեղերոց – (104ա-138ա). «կատարեցաւ անուանք դեղերոցն ողորմութեամբ Աստուծոյ եւ ապիկար և նիդար ծառայից ծառա Աստուծոյ Մատթէոս ընթերցողս գրեցի զսա ի Մեքաստիայ ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սրբոյն Սարգսի զօրավարին թվին ՌՃԿ (1711 թ.) ի փառս ամենասուրբ Երրորդութեան և եզակի աստուածութեան, որ տայ առատապէս ըզպարգևս խընդրողացն, ամէն»:

Ախրապատին Ամիրդովլաթայ Ամասիացոյ, (138ա-163ա):

Աստղագուշակութիւն – (164ա-176բ):

Հէքիմարան – (177ա-199ա):

Հէքիմարան – (201ա-231ա):

Ուսումն բժշկութեան – (232ա-272ա):

Օգուտ բժշկութեան – (276ա-326բ):

Ախրապատին ըստ Մուսի պին Մայմանի – (328ա-385ա):

Ակնհայտ է, որ ծավալուն բժշկական այս հավաքածուն առավելապէս վերաբերում է գործնական-կիրառական բժշկությանը և ժամանակին ծառայել է թե՛ որպէս ուսումնական ձեռնարկ ապագա բժիշկների համար և թե՛ որպէս բժշկարան գործնական բժշկությամբ զբաղվողների համար: Բժշկարանի հանգամանակից ուսումնասիրությունը կլինիկական բժշկագիտությամբ զբաղվող մասնագետների կողմից միայն հնարավորություն կտա այն արժեքավորել ժամանակակից բժշկագիտության համար:

Հայ բժշկագիտության պատմության ուսումնասիրության համար ինքնին կարևոր է նման բժշկարանի առկայության փաստը, որը թույլ է տալիս ավելի որոշակի խոսք ասելու սեփաստահայ բժշկագիտական դպրոցի քանակական և որակական ավելի լայն ընդգրկումների վերաբերյալ և համոզված արձանագրելու այն փաստը, որ այդ դպրոցը տվել է նաև այլ բժշկագետներ, որոնց գործերը չեն պահպանվել կամ դեռևս հայտնի չեն:

Հետևապէս աղբյուրագիտական մանրամասն հետազոտությունները կարող են ի հայտ բերել ինչպէս վերը թվարկված բժիշկների, այնպէս էլ անհայտ բժիշկների որոշակի արժեք ներկայացնող աշխատություններ, որոնք կգան հարստացնելու սեփաստահայ բժշկագիտական դպրոցի պատմությունը:

Տարբեր առիթներով մենք նշել ենք, որ սեփաստահայ բժշկական դպրոցի բնորոշ հատկանիշներից է նրա պրակտիկ-կիրառական ուղղությունը, որով և բնականաբար կարևոր տեղ են գրավում բուսաբուժության և հատկապէս թերապիայի հարցերը: Այստեղ անխոս առկա է արաբական բժշկագիտության, մասնավորապէս Իբն Սինայի ազդեցությունը, բայց հարստացված հայ բժշկագիտական այլ դպրոցների ներկայացուցիչների անձնական և բժշկական աշխատանքի արդյունքների արժեքավոր հավելումներով, մասնավորապէս պատճառագիտության, մահճաբուժության և թերապիայի հարցերում: Այդպիսին է նաև Մեսիյան-Մեքաստացիների տոհմի բժշկարանը: Յուրաքանչյուր ախտահարման թերապիան մշակելիս նրանց կողմից առաջարկվող բու-

ժամիջոցները փորձնական քննության են ենթարկվել բուժական պրակտիկայում, հետևելով դրանց արդյունավետության և հիվանդության ելքի վրա ունեցած ազդեցությանը՝ ստացել են ճշգրտված բժշկագիտական գնահատական: Բժշկարանում գրեթե յուրաքանչյուր հիվանդության բուժամիջոցները շարադրելիս վերջում կարդում ենք՝ «կօգնի», «փորձված է, շատ կօգնի», «խիստ օգտակար է» կամ հակառակը՝ «փորձեցինք, չի օգնի», «անբուժելի է» և այլն:

Ոչ երկրորդական մի հանգամանք ևս. ինչպես նշեցինք սեփաստահայ բժիշկները մյուս ժողովուրդների միջնադարյան բժշկական գիտության ձեռքբերումներից վերցրել են իր ժամանակի համար առաջադիմականը, ռացիոնալը, որին անշուշտ նպաստել է այդ դպրոցի ազգային-ռեզիդուալ լոկալիզացիան, բայց ոչ մի դեպքում գիտական արտադրանքի մեկուսացվածությունը: Այս պարագայում նույնիսկ գործունեության վայրի լոկալիզացիայի մասին պետք է խոսել վերապահորեն: Խնդրո առարկա բժշկարանի հիշատակագրություններից պարզվում է, որ այդ բժիշկները եղել են թափառող-պերիոդիկ բժիշկներ: Նրանք շրջել են տարբեր երկրներ (Կ. Պոլիս, Իսպահան, Մարզվան, Ամասիա, Լվով և այլն) և զբաղվել այդ վայրերում բժշկական պրակտիկայով: Տարբեր լեզուների իմացությունը նրանց հնարավորություն է տվել անմիջականորեն առնչվելու նախորդ դարերի տարբեր ազգային դպրոցների գիտական նվաճումներին: Սեփաստահայ բժշկագիտական դպրոցը մեկուսի երևույթ չէ: Նրանց գործերում, որոշակիորեն նկատվում է այլազգի բժշկագիտական դպրոցների ձեռքբերումների ինտեգրացիա: Ավելի քան ակնհայտ է սեփաստահայ բժշկագիտական դպրոցի գենետիկ կապը հայ բժշկագիտության Կիլիկյան և Պոնտական¹⁸ դպրոցների հետ: Ավելին, իր այդ գենեզիսը, հայ բժշկագիտական դպրոցների ավանդույթների շարունակողի ստանձնած դերը սեփաստահայ բժշկագիտական դպրոցի հիմնական արժանիքներից մեկն է, նրա կարևոր առաքելությունը, որովհետև հենց սեփաստահայ դպրոցն էր, որ ավանդույթների շարունակողի իր այդ դերով կապօղակ հանդիսացավ հայ բժշկագիտության կլասիկ միջնադարի (11-15-րդ դդ.) և եվրոպական վերածննդի ազդեցությունը կրած 19-րդ դ. հայ բժշկագիտության միջև: Բայց, իհարկե, սեփաստահայ բժշկական դպրոցի հիմնական և յուրահատուկ առանձնահատկությունը նրա խմբագրական գործունեությունն է, որը մի անգամ ևս հաստատվում է Մեսիյան տոհմ-ընտանիքի կողմից ստեղծված բժշկարանով:

Ընդհանրապես միջնադարյան գիտական գործունեության այդ կողմը՝ խմբագրական գործունեությունը, պետք է պատկերացնել շատ ավելի լայն առումով:

Այն առանձին կարևորություն է ստանում այնքանով, որ միջնադարյան գիտության տեղային առնչումների, գիտության ընդգծված տեղայնացման պայմաններում (առանձնապես Արևելքում) այդօրինակ խմբագրական գործունեությունը փաստորեն ձեռք է բերել տարբեր շրջանների գիտական արդյունքների ի մի բերման նշանակություն, ժամանակակից գիտական տերմինով ասած՝ ստացել է գիտական ձեռքբերումների կոորդինացման արժեք: Հիշենք թերևս այս առիթով, որ դեռևս 11-12-րդ դդ. Ա-

¹⁸ 15-16-րդ դդ. Փոքր Ասիայի Ամասիա քաղաքում քաղաքական և տնտեսական նպաստավոր պայմանները ծնունդ տվեցին հայ մշակութային մի նոր դպրոցի, որը ընդունված է կոչել Պոնտական դպրոց և որի անմիջական արտահայտությունը հանդիսացավ Ամասիացի մեծ բժշկապետի բնագիտական գործերի հիման վրա ձևավորված բժշկագիտական միտքը (Շ. Քասունի, Պատմություն հին հայ դպրութեան, Բեյրութ, 1959, էջ 268):

րևմտյան Եվրոպայի հանրահռչակ Սալերնոյի դպրոցի բժիշկներից շատերը (մասնավորապես Կոստանտին Աֆրիկացին) հունական, բյուզանդական և արաբական բժշկագիտության դասական հեղինակների աշխատությունների խմբագրմամբ և վերամշակմամբ ստեղծում էին բժշկագիտական ձեռնարկներ, որոնք դարեր շարունակ որպես ուսումնական ձեռնարկներ օգտագործվում էին Արևմտյան Եվրոպայի տարբեր բժշկական դպրոցներում¹⁹:

Խոսելով գիտության մեջ ազգայինի և միջազգայինի դիալեկտիկայի մասին՝ գիտական դպրոցների որակավորմամբ և ուսումնասիրությամբ զբաղվող խոշոր գիտնական Յարոշևսկին նշում է. «Իրականում գիտությունը ստեղծում են մարդիկ, սնած որոշակի ազգային մշակույթի հողի վրա, ներծծելով պատմականորեն ձևավորված այդ մշակույթի հարստությունը, նրա ինքնատիպ ավանդույթները: Դրանք ոչ թե վերացական անհատներ են, այլ կոնկրետ մարդիկ, որոնց ստեղծագործությունների մեջ տարբեր աստիճանի խտացված են իրենց ժողովրդի ցավն ու կարիքները»²⁰:

Այս բնորոշումը լիովին վերաբերում է սերաստահայ բժշկագիտական դպրոցի բոլոր ներկայացուցիչներին:

¹⁹ **Lawn Brian**, The Salernitan Questions. An Intred, to the History of medieval and Renaissance Problem Literature, Oxford, 1963.

²⁰ **Ярошевский М. Г.**, Логика развития науки и научная школа (см. Школы в науке, под ред. Микулинского С. Р., Ярошевского М. Г., Кребера Г., Штейнера Г., М., 1977, с. 28).